ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020 թվականի N 1597 - Լ

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել 2021 թվականին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

2. 2021 թվականին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերը Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1597 - Լ որոշման

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Ծրագրի դասիչը	**Միջոցառման դասիչը**	**Միջոցառման անվանումը**	**Պետական մարմնի գերատեսչական դասիչը և անվանումը**	**Հետազոտություններ**	**Հետազոտությունն իրականացնող կազմակերպության անվանումը**	**Միջոցառ-ման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)**
1162	**11006**	**Գիտական - գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ**	**104010 - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**			**4710183.3**
				ԵՊՀ հիմնադրամի «Տեղեկատվական անվտանգության գիտահետազոտական կենտրոն» ծրագրին պետական աջակցու-թյուն	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	8400.0

				«Մատենադարան» հիմնադրամի «Մատենադարանի մեծադիր ձեռագրերի (Հայսմավուրքներ, Ճառընտիրներ) և հազվագյուտ վավերագրերի ամրակայում ու գիտատեխնիկական մշակում» ծրագրին պետական աջակցություն	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀԻ» հիմնադրամ	21600.0
				ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ ՊՈԱԿ-ի «Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	26400.0

				ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ՊՈԱԿ-ի «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ	9600.0
				ՀՀ ԳԱԱ ԵԳԻ ՊՈԱԿ-ի «Գեոպարկը որպես տնտեսության կայուն զարգացման և բնապահպանության խթան Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	10200.0
				ՀՀ ԳԱԱ «Էկոկենտրոն» ՊՈԱԿ-ի «Փորձագի-տական երկրաքիմիա-կան քարտեզների մշակում կայուն գյուղատնտեսության զարգացման և սննդի	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆե-րային հետազոտություն-ների կենտրոն» ՊՈԱԿ	15600.0

				անվտանգության ապահովման համար» ծրագրին պետական աջակցություն		
				ՀՀ ԳԱԱ ԿՀ ԳԿ ՊՈԱԿ-ի «Սևանա լճի էվտրոֆացման մեխանիզմների գնահատում և «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանու-թյան և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	14400.0
				ՀՀ ՄՆ ՊՄԺ ԳՀԿ ՊՈԱԿ-ի «Հայոց արքաների դամբարանների հետազոտում. II փուլ, շարունակական պեղումներ» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Պատմամշակու-թային ժառանգության գիտահետազոտա-կան կենտրոն» ՊՈԱԿ	14400.0

				ՀՀ ԷԵԲՊՆ «Հայատոմ» ՓԲԸ-ի «ՋՋԷՌ տեսակի միջուկային ռեակտորներով էներգաբլոկների սարքավորումների և խողովակաշարերի տեղաշարժերի չափման ձևափոխիչների մշակում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարության «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական ԳՀԻ» ՓԲԸ	9600.0
				ՀՀ ԳՆ ԲՏՄ ԳԿ ՊՈԱԿ-ի «Տեղական բանջարային մշակաբույսերի գիտականորեն հիմնավորված սերմնաբուծության միջոցառումների կազմակերպումը» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Բանջարաբոս-տանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	5760.0

1119	**11001**	**«Գիտական - գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտո-րական աշխատանքներ**	**ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն**			4574223.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ